# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԷՍ ԹԻ ԷՅ-Ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | |
|---|---|---|
| | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 21 | Էս Թի Էյ ՍՊԸ | Բաղկացած է կոշկերեսի քթամասից, կրնկամասից՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով, ճտքերից, լեզվակից, փափուկ եզրակից, հիմնական ներդիրից, մաշվածադիմացկուն ներբանից (տակացուից) և հանովի-դնովի ներդիրից: Քթամասը մշակված է ամբողջական առաջամասով, ճտքով և կրնկամասում՝ ամբողջական բարձրությամբ հետնամասի գոտիով: Լեզվակը ամրացված է առաջամասին և ճտքերին: Բոլոր դետալները իրար միացվում են սոսնձով և կարվում են սինթետիկ թելով, որի կարը պետք է թույլ չտա ջրի և խոնավության ներթափանցումը ճտքավոր կոշիկի ներսամասի դետալներ: Երեսամասը պատրաստված է խոշոր եղջերավոր անասունի բնական սև կաշվից, մշակված անջրաթափանց ծածկույթով: Կոշկերեսի քթամասի և հետնամասի կաշվի հաստությունը պետք է լինի 1,8-2,2մմ, լեզվակը՝ 1,1-1,3մմ, ճտքերը՝ 1,6-1,8մմ: Ճտքի քուղերի անցքերը մշակվում են 7-9 զույգ (կախված կոշիկի չափսերից) կոճականցքերով՝ պատրաստված պլաստմասսայից (պատրաստված հատուկ նշանակության պլաստմասսայից) կամ մետաղական՝ պատված պաշտպանիչ ներկով,որը կապահովի խոնավ և ցածր ջերմաստիճանի ժամանակ կորոզիայից: Քուղերը պատրաստված են ամուր, անջրաթափանց սինթետիկ քիմիական մանրաթելից, յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Կոշիկի ճտքերի բարձրությունը 40-44 միջին չափսի համար 21-23սմ է, |

| | | |
|---|---|---|
| | | մնացած չափսերի շեղում՝ ±3,0մմ: Բարձրությունը չափվում է ճտքի արտաքին մասով, կրնկամասում ներբանի և ճտքի միացման եզրից մինչև ճտքի վերին եզրը: Ներբանին ամրացվող հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված, 2,0-2,6մմ հաստության բնական հումքից՝ պադոշից, որոնց մեջ դրվում է մետաղական սուպինատոր: Կաշվե դետալները հակառակ կողմից պետք է մշակված լինեն տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կհաղորդի չափավոր ծավալային կայունություն: Ներբանը արտադրվում է միաձույլ, մաշվածադիմացկուն ռետինից և ապահովում է հետքերի զարդանախշերից ինքնամաքրումը: Ամրանում է բարձր ճնշմամբ, սոսնձման եղանակով: Պետք է պատրաստված լինի մաշակայուն թերմոպլաստիկ կաուչուկից: Ներբանը գետնին պետք է հպվի հարթ, առանց ճոճվածքի: Ճտքերի վերնամասը երկկողմանի մշակվում է կաշվով, որի միջուկը մշակվում է 2մմ հաստությամբ ինքնասոսնձվող պոլիեթիլենային փրփուրով: Հարթ կաշվով արտադրելու դեպքում քթամասը ներսի հատվածից մշակվում է բյազ կամ գաբարդին տեսակի կտորով, իսկ նախշով (նակատով) կաշվից արտադրելու դեպքում՝ թույլատրվում է նաև կաշվե ներդիրով: Հանովի-դնովի ներդիրը պատրաստված է բնական հումքից՝ լավ հարթեցված պադոշից: Քթամասը և կրունկամասը ներսից մշակվում է թերմոպլաստիկ նյութով, ընդ որում քթամասը 2,0-2,4մմ, իսկ կրնկամասը՝ 2,6-3,0մմ հաստությամբ: Կոշիկի կաղապարը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Կարերի ամրությունը համաձայն ԳՈՍՏ 447՝ պետք է լինի 115 Ն/սմ (կամ 11,5 կգ/սմ), փորձարկումը կատարվում է համաձայն ԳՈՍՏ 9292: Արտաքին տեսքը համաձայնեցվում է Գնորդի հետ: Փաթեթավորումը ստվաթղթե արկղերով, 1 արկղի մեջ 10-15 զույգ, արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսը և տարեթիվը: Կոշիկի չափերի քանակները տրամադրվում է Գնորդի կողմից: Արտադրվում է 38-47 չափերի: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

СТА ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/9 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | |
|---|---|---|
| | наименование производителя | технические характеристики |
| 21 | | |